

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ՌՅԿԸ-Թ

ՀԱՏՈՐ

ՀԷ

1919

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 10



Ս.
ՂԱԶԱՐ

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

1915- ՋԱՐԴԻՆ

ՀԱՄԱՇԻԱՐՀԱՑԻՆ աղետաւոր պատեւ-
րազմը որ ասեր ու քանդում տուաւ տըն-
տեսապէս ու բարոյապէս ամէն անհատի,
ընկերութեանց, վանքերու ու միաբանու-
թեանց, իր սաստկագոյն հարուածը մեզի
Հայերուս իջեցուց: Չունինք ընտանիք մը,
ընկերական միութիւն մը, կուսակցութիւն
մը՝ որ իր արդար ցատումին վրէժը չպոռծ-
կացնէ այն անասնական զօրութեան դէմ՝
որուն լուծը դարերէ ի վեր վայրագօրէն
կը Տօճար մեր հայրենական յարկին վրայ,
արարական սուրի մը պէս:

Յեղերու հոգին սամմաններ ունի՝ ուսկից
երբեք չանցնուիր. ու թուրքը թաւախուած
իր մարմնապաշտ արքշտութեան մէջ՝ չի-
մացաւ թէ ժողովուրդի մը երկրին տիրելը
չի բաւեր, նուաճելու համար՝ պէտք է
անոր հոգին յաղնել: Տարագրեց մեզ ու
ցրուեց՝ միացանք, սրահատեց՝ կենդա-
նացանք, վանքերը պրծեց՝ վանականները
սրբացան, կոյսերը բռնաբարեց՝ տահար-

ները քանդեց՝ եւ անմահացան: Ու մեր
Թշնամին շատ լաւ կարդաց մեր ժողո-
վուրդի հոգին իր գործերուն մէջ՝ քան իր
Թերութեան ու պարբերականներուն: Որքան
իր նիւթական ոյժը սարսափելի է, նոյնքան
մեր հոգեկանը՝ անպարտելի:

Եղած քաղմակողմանի կորուստներու մէջ՝
կղերինը անդարմանելի է. ժողովուրդը
կրնայ քիչ ժամանակի մէջ կրկնապատ-
կուիլ, բայց կղերն ու վանքերը տարիներ
կ'ուզեն իրենց մարտիրոսներուն կորուստը
լրացնելու համար: Մեր Միաբանութիւնն
ալ, ինչպէս միշտ, ցուցուց իր դէպի Ազգն
ունեցած սէրը տուած զոհերուն սրբազան
արիւնովը. զոհեր՝ որոնք դառնագոյն կսկիծ
մը եղան ոչ միայն իրենց հոգեկից երբայր-
ներուն, այլ նաեւ իրենց ընտանեացը եւ
բովանդակ Ազգին. վասն զի կորսնցուցինք
գրականութեան եւ գիտութեան արշա-
լոյսներ:

Թոպաման անշնչացաք խաւարի մէջ, Նա-

հատակ էր բայց ձեր տեղատարափ լոյսի շատայլը՝ դարերէն պիտի ճառագայթէ մեզի՝ խրախոյսի եւ հաւատքի աստուածու լեռան մը պէս։ Զեր արիւնազանգ մարմինը ոչ մէկ կանկիւ արցունքէ չօծուեցաւ, արեւու շող մ'իսկ չգգուեց ձեր շունչը, բայց բովանդակ Ազգը ու Մարդկութիւնը ու նիք ձեր կուսական նշխարներուն երկրպագող։

Միաբանութիւնս ուրեմն ունեցաւ չորս մարտիրոս քամանակներ, չորսն ալ հաւասարապէս նուիրական, որոնք Ազգին Սիրոյ բագինին վրայ յօշոտուեցան մեր դարաւոր թշնամիէն։ Երեքը, Հ. Ստեփանն Վ. Սարգսեան, Հ. Կարապետ Տէր-Սահակեան եւ Հ. Թովմաս Օտապաշեան, արհաւիրքի այդօրերը Տրապիզոն մեր վարժարանին վարչութեանը զբաղելու պահուն՝ տեղեւոյ ժողովրդեան հետ կը տարագրուին, եւ յետ անգլամ ու անլուր տանջանքներով կը նամատակուին։ Իսկ չորրորդը, Հ. Պողոս Գասպարեան նոյնպէս կը տեղամասնուի Գերպ. Մալոյեան Եպիսկոպոսին հետ Մերտիկ մէջ, ու վկայական մամը կ'ընդգրկէ։

Հ. ՍՏԵՓԱՆ, ՍԱՐԳՍԵԱՆ, երիցագոյնը մեր Նամատակներէն, ծնած է Գաղատիա (1865 – 1915)։ Ուսում եւ կրօնաւորական սքեմ առնելէ ետք Մայրսկանքիս մէջ, իր կեանքի մեծագոյն մասը նուիրեց դաստիարակութեան ասպարէզին. նախ պաշտօնավարեց երկար ատեն վանական շրջանակի մէջ, յետոյ մտաւ իրբեւ Տեսուչ մեր գանազան վարժարաններուն մէջ՝ կրեկելու Ազգին գաւակներուն սիրտն ու միտքը. եւ իր պաշտօնը ի վերջոյ արդիւնաւորապէս պսակեց Տրապիզոնի մէջ դարձեալ իրբեւ Տեսուչ։ Հոն՝ իր դպրոցական զբաղմունքներովը հանդերձ՝ յոյժ սիրելի եւ համակրելի եղած էր տեղացի հայութեան՝ իր տիպար եկեղեցականի հանգամանքովը, եւ անծանօթութեամբ կը խնամէր հոգեւորապէս իր վրայ հիացող ժողովուրդը, ըլլալով ամենուն հաւասարապէս գեթալից եւ հշմարտ հայր մը։

Հ. Ստ. Սարգսեան հարտար դաստիարակ

մ'ըլլալէ զատ, էր նաեւ մեծ գիտնական մը եւ աստուածաբան փիլիսոփայ մը. ինքը գրած է հատոր մը *Տեսական Աստուածաբանութեան* տպում 1894ին, որ քսանմեակ մը տարիներ լուստաշնորհը եղաւ աստուածաբանութիւն ուսանողներու իր ամենահոյ պարունակութեամբը մեր Նամատեաց գրութեանց գեղեցիկ կոչումներով։ 1902ին հրատարակեց *Եպիսկոպոս Ժագոսեան*, տալով ի լոյս՝ մեր կարգ մը Եւրոպայ եւ այլուր ուսանող իմաստամիտներուն՝ որոնք ժամանակի նորոյթին հոսանքէն տարուած, Գերմանիոյ եւ Գաղղիոյ գիտնական ուսուցիչներու կրօնափիլիսոփայական խնդիրներու անտարբէրութիւնը՝ կ'ուզէին մեր անմեղ ժողովուրդին մէջ ներմուծել։ Ունի նաեւ *Մագնիսական քունք* շահաւէտ գրութեանը։ Այս հատորներէն զատ երկար ատեն ըլլալով իր օգնական *Բագրատիկ* հանդէսի խմբագրին՝ հոյսացուց զայն իր գիտական, մատենագրական եւ իմաստասիրական յատուկ յոգեւածներով եւ թարգմանութիւններով։

Կեանքի դարձերին վրայ խլուած մարտիրոսը՝ այսօր կը ժպտի իր Ազգին ըրած բարիքներուն վարձը ժառանգելով. ամէն անոնք, որ իրմէ հոգեկան կամ նիւթական վայելք մը ունեցան, երախտագիտութեան պակ մը պիտի նուիրեն իր խնկելի յիշատակին՝ իրենց սիրոյն իբրեւ յաւերժական գրական մը։

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ, երկտասարկ բանաստեղծ մատնագէտը, դառնագոյն կակիծը տուտ բոլոր հոգեկան դասակարգին իր վաղմուս մահովը։ Ծնած է Մուշի մէջ (1882 – 1915), իր լուսավոր պատանեկութիւնը անցուցած է Ս. Ղազարու կղզեկին մէջ։ Վէճակոյ հմայիչ երկնքին տակ ջնջ մայրամուտքի հազարահեղ երկնաւորումները՝ միշտ ներշնչած են իրեն բանաստեղծութեանց մէջ հանգիստութիւն մը Մայր Հայրենիքի բնութեան ներդաշնակ գեղերփնման հետ։

Յետ քանանայ ձեռնադրուելու 1902ին, երկար ատեն դասատուութիւն ըրած է վանքի Նորնծայից եւ յետոյ անցած Զուլ-

ցերեղի Թրիպուրիլ քաղաքը՝ Գրականութեան համալսարանական ընթացքն ընելու:

Իր հոգւոյն էական պէտք մըն էր Գրականութիւնը, ուստի լիովին յաջողութեամբ վերջացնելով պակասւորեցաւ այդ մասնա-
 փաղին մէջ ու գրեց իր Աւարտահաւոր, *Հաղորդական յԱրեւելս* վերնագրին տակ, ստուար հատորի մը մէջ: Համալսարանական գրադասներէն ետքը, երբ այն ինչ սկսած էր մօր գրականութեան նոր թռիչք մը տալ իր սուր դիտողութիւններով ու բանաստեղծի բոլոր յատուկ ձիրքերովը, ղրկուեցաւ Տրապիզոն մեր Միսիմարեան վտրժարանը Ուսուցչական պաշտօնով: Թէ Հ. Կարապետ ինչպիսի սէր եւ համակրանք շահեցաւ հոն իր դպրոցավարական կազմակերպութեամբ, ընկերական բարբոսն ու գիտութեամբը, որ իրեն միայն յատուկ էր, դեռ մինչեւ այսօր իր Ռեու ապրողները կը վերլիչեն ափսոսալով իր մահը: Ան՝ անդամանելի զոյ մըն է Հայրենիքի Սեղանին վրայ քաւած, իր գանկը որուն մէջ կը սնուցանէր միշտ Ազգասիրութիւնը ջախջախուեցաւ թուրք արիւնարբու բազուկէն տեղամանութեան համբուն վրայ..... Այսպէս վաղա-
 ժամ կտրուած այս ծաղիկը չունեցաւ ժաւ մանակ արտադրելու բոլոր որ իր տաղանդէն կարելի էր սպասել: Այնու հանդերձ տուաւ մէկ քանի մատենագրական գործքոյններ ինչպէս Հայ *Կայսրիքը Ռիզասեդիոնի մէջ* եւ իր աւարտահաւոր *Chateaubriand en Orient* հմուտ գրուածքը՝ որով իր կուրվամիտ քննադատութեամբը հայ տաւաղանդը աւելի եւս փայլ մը ու փառք մը շործեց թէ իր համալսարանի գիտնական ուսուցիչներէն ու թէ բովանդակ գրական աշխարհէն:

Թէպէտ բազմաթիւ հատորներ չէ թողած մեր կարգ մը գրագէտներուն նման, սակայն իր մտքին բոլոր արտադրութիւնը *Քաղմպիկ* Հանդիսագրին եւ այլ թերթերու մէջ ցրուած, օր մը առանձին հատորով արդէն իսկ պիտի արտափայլեն իր տաւաղանդին սկսնակ շառայլը:

Գլխաւորապէս աշխատակցեցաւ *Քաղմպիկի* 1905 - 6 - 7 տարիներուն, տալով

պատմական, բանաստեղծական յօդուածներ, մատենագրական սրամիտ դիտողութիւններ: Իր ամէն մէկ գրութեան մէջ գինքը առաջնորդող Հայրենիքի եւ Ազգին սէրն է, զոր իւրացուցած էր իրեն յետ երկար ուսումնասիրութեան մը մեր Նախնեաց անցեալ փառքին:

Իր ուսմանաւորներուն մէջ գլուխ գործող մը կը կազմէ *Մեանայ Լիւթ* որով ի զուրկ տենչայ իր պանդուխտի օրերուն մէջ ու Վինետայոյ լոյս-մարմող ափունքներուն վրայ հայրենի վնակին հետ նմանութիւն մը գտնել:

Իբր բանաստեղծ՝ իր սակաւ ուսմանաւորներուն մէջ ապագայ մը ցոյց կու տար՝ որուն դարեր պիտի երկրպագէին. ունի բաւերու գեղեցկութիւն, գաղափարի նըրբութիւն, եւ զգացումի թալկացնող շնչտ մը, որ արեւելքի մեղեդիներուն միայն յատուկ է: Փափաքելի էր որ մեկենաս մը իր այս գեղեցկափիւս ուսանաւորները ի լոյս ընծայէր միակ հատորով մը: Մատենագրական յօդուածներուն մէջ իր սրամիտ եւ գիտնական դիտողութիւնները գուշակելու տան իր մէջ՝ ապագայ մեծ քննադատը: Ունի ուսումնասիրական յօդուածներ-միշտ թալկամէլէպի մէջ-Փարպեցիին, Փաւստոսի, Կորինի, եւ աւ հասարակ նախնի Մատենագիր հեղինակներուն եւ անոնց գրուածներուն վրայ լուսարմատութիւններ եւ նոր անդրադարձութիւններ:

Միաբանութիւնս իրմով կորսնցուց աստղ մը՝ որուն լոյսը դեռ չափով մը վայելեց Ազգը: Անոր փառքը յաւերժական պիտի ըլլար մեր գրականութեան մէջ, եւ այսօր կ'աւաղենք վաղամահ բանաստեղծին մէջ մարդը՝ որուն սիրտը իր տառապեալ Յեղին համար միայն բաբախեց: Ի՜նչքան դողդոցուն է մահը նորածնաց կեանքի մը համար, կեանքի մը համար՝ որ գրկաբաց փառքերու կ'ընդառաջէ սուգուած երազանքի խոհերուն մէջ: Դուն, պաշտելի հոգի, սուրի ու սարսափի սողսկումին տակ վեհօրէն մերժեցիր այն բիրտ ձեռքը՝ որ անշուշտ բու կեանքը իբրեւ իր պարգեւը քեզի կը ձօնէր, մերժեցիր զայն Յեղի-

յատուկ շարժումներով՝ պատանի հոգինե-
րուն ոսկորները ներկելով քուկին ազնուա-
կան ու սրբազան արիւնովը . Հանգիստ
ոսկրներուդ :

Հ. ԹՈՒՎԻՍՍ ՕՏԱՊԱՇԵԱՆ ծնած է
Տրապիզոն (1886-1915) : Հագիւ աւարտած
իր ընթացքը քսիանայ ձեռնադրուեցաւ
1910ին : Յետ դասատու կարգուելու վառ-
քիս աշակերտաց՝ դրկուեցաւ ի Տրապիզոն
իբրեւ ուսուցիչ եւ դաստիարակ մեր դպրո-
ցի պատանիներուն :

Համակրելի երիտասարդ վարդապետը
արագավախճան իր օրերուն թէպէտ չկրցաւ
իր աշխարհագրական արտադրութիւնները
տալ Ազգին՝ որոնց յատուկ եւ ինքնաբեր
ձկտում մը եւ կարողութիւն ունէր . սա-
կայն իր աշխատանքն ու վաստակը , յաւեր-
ժապէս դրոշմուած պիտի մնայ Սարսափէն
վերապարծ բոլոր այն երիտասարդ հոգի-
ներուն մէջ՝ որոնք բարեախտութիւնն ու
նեցան իր խոհական խորհուրդներէն ապա-
գայ կեանքի բարեկեցիկ կրթութեան մը
ուղղութիւնը եւ առաջնորդութիւնը ծծելու :

Ինք ալ Տրապիզոնի տարագրեալ մեր հայ-
րերուն տանջանակից եղաւ , եւ հսկառակ
իր երիտասարդ հասակին ու կեանքի ա-
պրումի ետեւեւին՝ կարկառեց իր աստուա-
ծադրոշմ ձեռքն ու ֆակստը այն սրբազան
պսակին՝ զոր նոյն ինքն մեր քաջարի Յեղին
մարտիրոս մայրերը ու հայրերը երկարեցին
երկնքէն... :

Հ. ՊՕՂՈՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ ծնած է
Մերտին (1878-1915) : Ինքը թէպէտեւ տա-
րիքոտ եկած է վանք աշակերտելու , բայց
քիչ ժամանակի մէջ այնքան ճշգրտէն կը
կաղապարուի Միաբանութեանս ոգիին մէջ
ուսումնապէս եւ հոգեպէս՝ որ մեծ զար-
գացումով կը թեւաւորուի ու հսկայաքայլ
կը յառաջանայ գիտութեան ու սրբութեան
ծարաւով : Յետ քսիանայ ձեռնադրուե-

լուն եւ կարճատեւ դասատուութենէ վերջ
վանքիս աշակերտաց , Հռովմայ մէջ կա-
տարեց Աստուածաբանութեան համալսա-
րանական ընթացքը կատարեալ յաջողու-
թեամբ , եւ դարձաւ ի Ս . Ղապար նոյն
գիտութեան մէջ պսակաւորեսալ : Վերադար-
ձէն ետք քիչ ժամանակ կրցաւ Տպարանի
Տեսչութիւնը վարել , որովհետեւ Միաբանու-
թիւնս դրկեց զինքը ի Մերտին՝ Մալոյեան
Եպիս. Է. իբր օգնական քսիանայ : Հոն բա-
ցաւ դպրոց մը որուն թէ՛ Տեսչութիւնը
եւ թէ՛ դասատուութիւնն իր վրայ էր , հաս-
նելով միանգամայն ժողովրդեան բոլոր հո-
գեկան պէտքերուն : Որքան որ Հ . Պօղոս
ուրիշ բերում մը կը գգար իր մտաւորական
բարձր կարողութեան համաձայն , սակայն
նախախնամութիւնը այլապէս տնօրինեց .
իրեն ալ պակսեցաւ ժամանակը գրական
ասպարէզին վրայ երեւնալու , բայց գերա-
դասեց նուիրել իր կեանքը բովանդակ
զոհողութիւններով եւ վարել ժողովուրդին
միտքն ու հոգիին ուղղութիւնը :

Ունէր բացարձակ կոչում մը փիլիսո-
փայական եւ աստուածաբանական գի-
տութեանց , սրամիտ դիտողութիւններ ,
եւ յստակ վարդապետութիւն , ունէր ա-
նանց փառքի ապագայ մը զոր վաղահաս
մահը շորթեց , պատճառելով իր միաբա-
նակից եղբայրներուն սրտաճմիկ խոհեր :

Որքան ականջալուրնէրէ կարելի էր տե-
ղեկանալ , Հ . Պօղոս Վ . Է մանր՝ եղած է
այն դառնագոյն մահերէն մին ինչ որ է
մեր բոլոր եկեղեցական սրբազան անձե-
րունը : Արիւնարբու թուրքերն ու տեղացի
արաբները երբ կը տարագրեն Մերտինի
բովանդակ հայրութիւնը իրենց ուսեսալ ու
լուսամիտ չեպի . Է , եւ Հ . Պ . Գասպարեանի
հետ , յետինս անլուր եւ անտանիքի տառ-
ջանքներէ վերջ , գնդակահար կ'աւանդէ իր
սրբազան հոգին , խրախոյսի լուսաւոր շա-
ւիղ մը գծելով իր հոգեւոր ոյրւոցը՝ բո-
վանդակ ժողովուրդին : Հ . Ա . ՏԵՐԵՏԵ